ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ



ՆՌՆԵՆԻՆԵՐԸ

«Նոնենիները»

ԲԵՄԱԳԻՐ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՐԱՐ Ա

Հաղորդավար - Էրիկա Դինունց

Հորեղբայր - Գոռ Խաչունց

Զարմիկ - Ալեքս Միկա Ավանեսյան

ԱՐԱՐ Բ

Հեղինակ - Ալյոնա Մալունց

Հորեղբայր - Գոռ Խաչունց

Զարմիկ - Ալեքս Միկա Ավանեսյան

Դ՛Ագուստինիո-Ալեքս Յուզբաշյան

Պարոն Գրիֆիթ- Էրիկա Դինունց

ԱՐԱՐ Գ

Հեղինակ-Ալյոնա Մալունց

Հորեղբայր-Գոռ Խաչունց

Զարմիկ-Ալեքս Ավանեսյան

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ: Բարև ձեզ, հարգելի՛ ներկաներ, այսօր մենք կներկայացնենք օտարագիր հայ գրող Վիլյամ Սարոյանի «Նռնենիները» պատմվածքի բեմականացումը:

Դժվարին մանկություն և նույնքան դժվարին պատանեկություն, պատանի, երիտասարդ, ապա չափահաս Սարոյանը պիտի ստեղծեր իր գրական-ստեղծագործական սարոյանական աշխարհը, որի բնակիչները պիտի լինեին իր ճանաչած մարդիկ: Խոր է ապրել կյանքը համբավավոր գրողը, խոր է զգացել կյանքի հակասությունները և դժվարությունները, բայց այդ ծանրությունը նա տարել է միշտ լավատես ժպիտով, գրեթե մանկական անմիջականությամբ, միշտ իրական կյանքում լավը որոնելու և անպայման գտնելու ցանկությամբ տառապող հոգու մակընթացությունով և տեղատվություններով, հաճախ հակասական, չարի դեմ անզոր, բայց միշտ լավատես, բայց միշտ հումանիստ:

ԱԼՅՈՆԱ: ՍԱրոյանի գրական շատ կերպարներ ներկայացնում են հայկական միջավայրը՝ ազգային ավանդույթներով ու բարքերով: ՀԱյրենիքի մոտիվը, ինչպես և նրա դարավոր ավանդույթները պահպանող մարդկանց կերպարները հակադրվում են կյանքի համահարթեցնող չափանիշներին:

ԱԼԵՔՍ ՄԻԿԱ: Իրականության և երազանքի հակադրության, անհատի ներքին ազատության և հոգևոր գեղեցկության, սիրո և բարու մոտիվներն են մարմնավորված Սարոյանի արձակում: Պատահական չէ, որ Սարոյանի հերոսներից շատերը հայեր են, որոնք ներկայացնում են հայկական միջավայրը, հայկականը՝ օտար միջավայրում:

ԳՈՌ: «Օտարության մեջ ապրող հայերի մեջ մեծ է Հայրենիքի հանդեպ կարոտը; Բայց դա հիվանդություն չէ; Դա ուժ է; Եվ այն օգնում է ճանաչել ինքդ քեզ»:

ԱԼԵՔՍ: Հայոց մեջ նռնենին համարվել է առատության և պտղաբերության խորհրդանիշը: Հայկական ճարտարապետության մեջ, հուշարձանների պատերին, խաչքարերի վրա հաճախ կարելի է տեսնել նռան զարդաքանդակներ; Հայկական ավանդության մեջ նուռն իբրև ազգային խորհրդանիշ կրում է կյանքի, ծաղկունքի ու առատության իմաստը; Այն պտղաբերության, լիության ու բախտավորության խորհուրդ ունի; Նուռն առկա է հայկական մշակույթում;

ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ա

ԶԱՐՄԻԿ: Մելիք հորեղբայրս երևի աշխարհի ամենաձախողակ ագարակատերն էր: Սեփական երևակայության ձեռքը կրակն էր ընկել: Միրտը գեղեցկություն էր ուզում. ուզում էր, որ ծառ տնկի ու աճելը տեսնի: Ես իմ ձեռքով հարյուրից ավելի նռնենի եմ տնկել: Սա հողագործություն չէր, զուտ արվեստ էր: Հորեղբորս դուր էր գալիս ծառեր տնկել ու նայել, թե ոնց են աճում: Հակառակի պես չէին աճում: Պատճառը հողն էր, չոր էր, ոնց որ անապատ:

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Էս հողն իմն է, էստեղ, էս ահավոր անապատում ծաղկանոց կբացվի, հողի տակից սառն աղբյուրներ կբխեն, ու մի սքանչելի հեքիաթային գեղեցկություն կսարքենք:

ԶԱՐՄԻԿ: Հա՛, հորեղբայր:

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Էս արարածն ի՞նչ էր:

ԶԱՐՄԻԿ: Էս պստիկ մողե՞սը: Հաստատ չգիտեմ, բայց դրանց քարադոդոշ ենք ասում;

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Թունավո՞ր է;

ԶԱՐՄԻԿ: ՈՒտե՞լը, թե՞ կծելը;

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Էն էլ, էն էլ;

ԶԱՐՄԻԿ: Չէ, ուտելու չի; Բայց ոնց որ անվնաս է; Էնքա՛ն եմ բռնել: Որ բռնում ես, տրտմում են, բայց չեն կծում; Կուզե՞ս բռնեմ:

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Լավ կանեիր; Զգույշ; Հաստա՞տ թունավոր չի: Ի՜նչ լավ պստիկ արարած է, չէ: Ոչ մի անգամ սրա նման արարած մոտիկից չէի տեսել; Ոնց որ աչքեր ունի, երևի մեզ կտեսնի; Հազարով լինեն, վայ թե մարդ էլ կսպանեն;

ԶԱՐՄԻԿ: Էդքան շատ մի տեղ չեն հավաքվում; Մի տեղում դժվար մեկից ավելի կտեսնես; :

ՀՈՐԵՂԲԱՅՐ; Բռնելուց հո չե՞ն կատաղում:

ԶԱՐՄԻԿ: Հենց ցած դրեցիր, մոռանում են; Չեմ կարծում, թե երկար հիշողություն ունեն:

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Մի օր էստեղ տուն եմ սարքելու; Մի հոյակապ շքեղ տուն եմ սարքելու:

ԶԱՐՄԻԿ: Մի քիչ հեռու չի՞;

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Մինչև քաղաք հիսուն մղոն չկա. երեսունյոթ է; Կես ժամվա ճանապարհ է; Էստեղ ուրիշ ապրողնե՞ր կան:

ԶԱՐՄԻԿ: Մի երեք-չորս տեսակի օձեր կան; Բացի բոժոժավոր օձերից բոլորն էլ անվնաս են:

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Չլինի՞ ուզում ես ասել, որ էստեղ բոժոժավոր օձեր կան;

ԶԱՐՄԻԿ: Բոժոժավոր օձերը սովորաբար էս հողերում են ապրում;

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Քանի՞սը կլինեն;

ԶԱՐՄԻԿ: Ամեն ակրի վրա երկու, անգամ վեց հարյու քառասուն; Համարյա հազարուկես; Ակրը մեծ է; Մի ակրի վրա երկու օձը շատ չի: Հազիվ աչքովդ ընկնեն;

ՀՈՐԵՂԲԱՅՐ: ՈՒրիշ ի՞նչ թունավոր արարածներ կան էս հողերում:

ԶԱՐՄԻԿ: ՈՒրի՞շ, չգիտեմ: Մյուսները վտանգավոր չեն; Բոժոժավոր օձն էլ վտանգավոր չի, եթե վրան չկանգնես;

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Լա՛վ, առաջ անցի՛ր, բայց ոտքերիդ տակ նայի՛ր; Բոժոժավոր օձ տեսնես՝ վրան չկանգնես; Չեմ ուզում, որ տասնմեկ տարեկանում մեռնես;

ԶԱՐՄԻԿ: Հա՛, սըր, զգույշ կլինեմ;

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Էս անկենդան անապատն այգի պիտի դարձնեմ; Դժվարություններս գիտեմ ու դրանց հախից գալու ձևն էլ գիտեմ;

ԶԱՐՄԻԿ: Քարադոդոշների մասի՞ն ես ասում, թե՞ օձերի:

ՀՈՐԵՂԲԱՅՐ:Դժվարությունների; Նախ մեքսիկացիներ կվարձեմ ու գործի կդնեմ; Հողը կմաքրեն, հետո ջրհոր կփորեն:

ԶԱՐՄԻԿ: Ջրհորը որտե՞ղ ես փորոլու:

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Հողի մեջ: Հետո հենց ջուր ունեցանք, կասեմ, որ հողը վարեն; Հետո կսկսեմ աճեցնել;

ԶԱՐՄԻԿ: Ցորե՞ն;

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Ցորե՛ն; Ցորենն ինչի՞ս է պետք; Հացի եղածը հիսուն սենթ չի՞, նու՛ռ եմ աճեցնելու;

ԶԱՐՄԻԿ: Բա նուռն ի՞նչ արժի;

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Ի՞նչ իմանամ; Էս երկրում ո՞վ է նուռ տեսել: Հատը՝ տասը, տասնհինգ, քսան սենթ; Մի քանի ուրիշ պտուղներ էլ եմ մտքիս դրել;

ԶԱՐՄԻԿ: Դե՞ղձ;

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Հա՛, մի տասը ակր;

ԶԱՐՄԻԿ: Ծիրա՞ն էլ;

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Անպայման; Ծիրանը շատ անուշ պտուղ է; Ինքը՝ սիրուն, բույրը՝ փառավոր, կորիզը՝ քաղցր: Մի քսան ակր էլ ծիրանենի կտնկեմ; Մի երեսուն ակր էլ թուզ;

ԶԱՐՄԻԿ: Բա թթին ի՞նչ կասես:

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Թթենին շատ սիրուն ծառ է; Մեր երկրում դրանք շատ էին աճում: Հը, ինչքա՞ն տնկեմ, որ լավ լինի; Մի տասը ակր; Ձիթենիներն էլ են սիրուն; Մի տասը ակր էլ ձիթենիներ:

Տես, որ տուն հասնենք, էս արարքի մասին մերոնց մոտ չխոսես; Թող անակնկալ լինի, թե չէ տատիդ գիտես; Ինչ-որ մտքիս դրել եմ, կանեմ, հետո, որ գործն անենք, բոլորին ազարակ կբերեմ, թող զարմանան:

ԶԱՐՄԻԿ: Հա՛, սըր;

ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀԵՂԻՆԱԿ: Մեքսիկացիները գործի անցան ու հողը մաքրեցին; Համարյա տասը ակրը՝ համարյա երկու ամսում; Յոթ հոգով էին, քլունգներով ու բահերով էին աշխատում; Ոչ մի բան չէին հասկանում; Տարօրինակ գործ էր, բայց չէին բողոքում; Կարևորը, որ իրենց վարձը ստանում էին, էլ ինչ էր պետք: Երկու եղբայր էին՝ իրենց որդիներով; Կակտուսները երկար կտրած չմնացին, մաքրած հողը շատ շուտով կտրածի տեղն աճած կակատուսներով ու մացառներով ծածկվեց; Հորեղբայրս տրակտոր գնեց; Հողը խոր փորեց տրակտորը; Ամիսներն անցնում էին, բայց ջուրը չէին գտնում: Երեք ամիս անցավ, մինչև գտան ջուրը: Նռենիներ տնկեցին; Ամենալավ տնկիներն էին առել ու շատ թանկ: Ընդհանուր առմամբ յոթ հարյուր ծառ տնկեցին;Պապակ անապատում կորած՝ քսան ակր նռենիների այգի հիմնեցին: Մենակ մի խնդիր կար. Փողը վերջանալու վրա էր; Հորեղբայրը որոշեց ժամանակը, փողն ու եռանդը միայն նռենիներին նվիրել, մինչև սկսեն նուռը ծախել ու փող վաստակել; Առաջին տարվա բերքը երեք նուռ էր; Ծառերը մի փոքր մեծացան՝ համարյա աննկատ; Մի մասը չորացավ ու մեռավ; Հաջորդ տարի մի երկու հարյուր նուռ բերք հավաքեցին; Սիրուն արկղերի մեջ շարեցին ու առաքեցին Չիկագո՝ մի մեծածախ ընկերության; Տասնմեկ արկղ եղավ; Մի ամիս լուր չկար; Հորեղբայրը զանգեց ընկերության տեր Դ՛Ագուստինոյին;

Դ՛ԱԳՈՒՍՏԻՆՈ: Նուռը չի ծախվում;

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Արկղը քանիսո՞վ ես տալիս;

Դ՛ԱԳՈՒՍՏԻՆՈ: Մի դոլարով;

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Քիչ է: Արկղը հինգ դոլարից մի սենթ պակաս չտաս:

Դ՛ԱԳՈՒՍՏԻՆՈ: Մի դոլար էլ չեն առնում;

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Ինչու՞;

Դ՛ԱԳՈՒՍՏԻՆՈ: Չգիտեն՝ ինչ է նուռը;

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Հետո կասես՝ գործարար ես; Նուռ են, ի՞նչ են; Հինգ դոլարից պակաս չեմ տալիս;

Դ՛ԱԳՈՒՍՏԻՆՈ: Չի վաճառվում, մի հատն ինքս կերա ու ոչ մի երևելի բան չգտա:

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Գի՞ժ ես; Նռան պես պտուղ աշխարհում չկա; Հինգ դոլարը կես գինն է:

Դ՛ԱԳՈՒՍՏԻՆՈ: Ի՞նչ անեմ: Չեն վաճառվում, պետքս չեն:

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Եղա՛վ; Հե՛տ ուղարկիր: Արագ առաքումով:

ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ 3

ՀԵՂԻՆԱԿ: Ամբողջ ձմեռ հորեղբայրն ու զարմիկը ազատ ժամանակ նուռ էին ուտում: Հաջորդ տարի հորեղբայրը հողի վարկը չկարողացավ վճարել: Փաստաթղթերը վերադարձրեց նախկին տիրոջը:

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Պարո՛ն Գրիֆիթ, ստիպված եմ ձեր ունեցվածքը վերադարձնել, բայց մի փոքրիկ խնդրանք ունեմ: Քսան ակր նռնենի եմ տնկել ու շատ երախտապարտ կլինեի, եթե թույլ տայիք ծառերը խնամել:

ԳՐԻՖԻԹ: Խնամե՞լ, ինչի՞ համար;

ԶԱՐՄԻԿ: Հորեղբայրս հողը կորցրեց, ծառերն էլ հետը: Մի քանի տարի անց միասին էդ հողամասը գնացինք ու քայլեցինք նռնենիների այգու կողմը: Ծառերը մեկի պես չորացել էին: Հողը էլի կակտուսներով ու տափաստանային մացառներով էր ծածկվել: Տեղանքը առաջվա տեսքն էր ստացել;

ՀՈՐԵՂԲԱՅՐ: Հիշի՛ր, զավակս, հենց մեծանաս, կվերադառնաս հայրենիք: Յուրաքանչյուր մարդ պետք է ապրի իր հայրենի բնօրրանում, պահի ու պահպանի իր ազգային արժեքները: Վերադարձի՛ր և շենացրու՛ մեր երկիրը, նռան այգիներ տնկի՛ր, լսի՛ր մեր դհոլի, սրինգի, քանոնի անզուգական ձայնը, սարերում թնդացրու՛ մեր խրոխտ քոչարին:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Սարգիսջանյան Անուշ, ուսուցչուհի, ղեկավար

Մալունց Այլոնա, 7-րդ «Գ» դասարանի աշակերտուհի

Ավանեսյան Ալեքս Միկա, 7-րդ «Գ» դասարանի աշակերտ

Դինունց Էրիկա, 7-րդ «Գ» դասարանի աշակերտուհի

Խաչունց Գոռ, 7-րդ «Գ» դասարանի աշակերտ

Յուզբաշյան Ալեքս, 7-րդ «Գ» դասարանի աշակերտ